ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն – Անդրեյ Ղուկասյան

2. Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ Լոռու մարզպետ

3.Գործուղման վայրը և ժամկետները – 2019 թվականի նոյեմբերի 25-ից 27-ը Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոն, Մարսել

4.Հրավիրող կողմը – ՖՀ Պրովանս Ալպեր Լազուրի Ափ (ՊԱԿԱ) ռեգիոնալ խորհրդի նախագահ Ռենո ՄՅՈՒԶԵԼԻԵ

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդիրների համար էր նախատեսված) - մասնակցելու «Միջերկրականի ապագան» անվամբ 3-րդ միջոցառմանը

6. Քննարկված թեմաները - Քննարկվել են երկու վարչական միավորումների համագործակցության հետագա գործողությունները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Նոյեմբերի 25-ին ՊԱԿԱ-ի ռեգիոնալ խորհրդի նախագահի, ՊԱԿԱ-ի հետ համագործակցող այլ ռեգիոնների ղեկավարների հետ, մարզպետ Ա.Ղուկասյանը մասնակցել է «Միջերկրականի ապագան» անվամբ 3-րդ միջոցառմանը, որտեղ մարզպետը ելույթով հանդես է եկել եւ ներկայացրել Լոռու մարզի առջեւ ծառացած բնապահպանական եւ էներգոխնայողության խնդիրները, մարզի զարգացման հեռանկարները

- Պաշտոնական ընդունելություն ռեգիոնալ խորհրդի նախագահ Ռենո ՄՅՈՒԶԵԼԻԵԻ մոտ, որի ժամանակ ստորագրվել է Համագործակցության պայմանագիր երկու ռեգիոնների միջև
- Հանդիպում Մարսելում ՀՀ հյուպատոս Ռուբեն Խարազյանի հետ
- Հանդիպում Մարսելի հայ համայնքի հետ, այցելություն Մարսելի համազգային դպրոց եւ հայկական եկեղեցի
- Հանդիպում հայ-ֆրանսիական համահայկական հիմնադրամի ներկայացուցիչների հետ

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – Ռեգիոնալ խորհրդի նախագահի հետ հանդիպման ժամանակ ստորագրվել է Համագործակցության պայմանագիր ՀՀ Լոռու մարզի միջև համագործակցության շարունակության վերաբերյալ:

Համագործակցությունն ավելի ամրապնդելու, գործարար նոր կապեր հաստատելու նպատակով ՊԱԿԱ-ի ռեգիոնալ խորհրդի նախագահին կատարվել է փոխադարձ այցի հրավեր:
Հայ-ֆրանսիական համահայկական հիմնադրամի հետ պայմանավորվածություն կա Վանաձորի թիվ 3 դպրոցում իրականացնել էներգախնայողության ծրագիր:

9. Ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները - Ակնկալվում է երկու մարզերի միջև համագործակցության ակտիվացում, գործնական քայլերի իրականացում:
10. Ստորագրությունը, ամսաթիվը – 02 դեկտեմբերի, 2019թ.:

Recoverable Signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ Լոռու մարզպետ՝ Signed by: GHUKASYAN ANDREY 2208800265 Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ